

Հայաստանի Կոմունիստական Կուսակցության Գրականության Գործակալություն

ՍՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐ 1 ԳՈՐԾ. Մ. Ա. ՍՈՒՎՈՐԻՆԻ, ԹԱՐԳՄ. Վ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

891. 71

Մ-96

Ս.-ՊԵՏԵՐԱՅՈՒՐԳ

«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏՈՒՊ», ՍԱՅԿԻՆ ՓՈՂ. 10

1909

36

71
36

25 NOV 2010

ՍՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԱԵՐ 1 ԳՈՐԾ: Մ. Ա. ՍՈՒՎՈՐԻՆԻ, ԹԱՐԳՄ. Վ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ



ՀԵՎԵՐԵՆ

Ս. ՊԵՏԵՐՅԱՆ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏՈՒՊ», ՍԱՅԿԻՆ ՓՈՂ. 10
1909

07.08.2013

73676

0005 VON 85

ՀԻՊՈՏՈՒՄԻՆՈՒՄ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿՈՒՆԵՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՐԽԱՆԻ ԿՐԹԱԿՈՒՆԵՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



56460-66



ՎԱՐԴԱՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ

(Ծն. 1871 թ. † 1903 թ.)

«Пушкинская Скоропечатня»
С.-Петербургъ, Сайкинъ пер.10

Վարդան Մանուկեանը ծնւել է 1871 թուի
 մարտի 15-ին, Ղլլար քաղաքում: Նա իւր սկզբ-
 բնական կրթութիւնը ստացել է նոյն տեղի ծխա-
 կան դպրոցում, որտեղից 1882 թուին, զպրօցների
 փակւելու պատճառով հեռանում և սկսում է պա-
 րապել ինքնակրթութեամբ: Ութսունական թուա-
 կաններից նա սկսում է հետաքրքրւել թատրոնով
 և պէտք է ասել, որ իբրև եռանդուն սիրող, տե-
 դական երիտասարդութեան մէջ բաւական մեծ դեր
 է խաղացել: 1899 թուին ստանում է թոքախտ
 հիւանդութիւնը և ամբողջ չորս տարի տանջւելուց
 ու չարչարուելուց չետոյ 1903 թուի դեկտեմբերի
 21-ին մեռնում է, 32 տարեկան հասակում: Մահ-
 ւանից չետոյ նրա բոլոր աշխատութիւնները ան-
 չաչտացած են բացի երկուսից, որոնցից մէկը կի-
 սատ է, իսկ միւսը՝ սևագրութիւն: Նորա յիշա-
 տակը վառ պահելու համար, սևագրութեան տեա-
 րակից, որոշեցինք հրատարակել այդ փոքրիկ թարգ-
 մանութիւնը, որ, ի հարկէ, ունի մեծ պակասու-
 թիւններ թէ՛ ոճի և թէ՛ սխալների նկատմամբ:
 Յուսով ենք, որ կհանդիպենք անաչառ քննադատ-
 ների:

ՍՏԱԽՕՍՈՒԹԻԻՆ

Պատկեր 1 գործ. Մ. Ս. Սուգորինի, Թարգմ. Վ. Մանուկեանի:

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

}	Իվան Իվանովիչ
	Նրա կինը
	Զինուկա

Բեմը ներկայացնում է մի հիւրասենեակ ամառանոցում: Զախ անկիւնում դէպի պղի մի դուռն. մէջտեղ և աջ կողմ նոյնպէս դռներ: Նախ քան վարազոյրի բարձրանալը լըսում են ձայներ:

ՏԵՍԻ Ա.

(Կինը նստած է սեղանի մօտ բաղկաթոռի վրայ: Իվան Իվանովիչը անցուղարձ է անում սենեակում և մերթ ընդ մերթ կանգ է առնում կնոջ առաջ):

Իվ. Իվ. — Համաձայնելի՛ր ինքդ, որ ես այստեղ ոչ մի մեղ չունիմ:

Կինը. — Ի՞նչպէս թէ չունիս. ահա այդ հաւանում եմ:

Իվ. Իվ. — Բայց ի՞նչ կարող եմ անել. հօ չեմ կարող ես նրան ասել «կորէ՛ք, հեռացէ՛ք»: Զէ՞ որ այդ անբաղաբավարութիւն է:

Կինը. — Քեզ լսողը կրկարծի, թէ ոչինչ էլ չի պատահեր:

Իվ. Իվ. — Եւ ի՞նչ կարող է պատահել: Զէ՞ որ ես նրա վրա սիրահարւած չեմ:

Կինը. — Բայց երևի պատճառ կայ, որ նա քո սենեակում այնպէս երկար է մնում:

Իվ. Իվ. — Է, ե՛ս ինչ զիտեմ: Ի՛նքզի հարցրու: Նա քո ընկերուհին է, հարցրու է՛լի: Գուցէ իրօք նա սիրահարւած է ինձ վրա. միայն նա զեռևս ոչնչով չէ արտայայտել իւր սէրը . . . բացի այդ, մեր խօսակցութիւնը նրա հետ միշտ դէսից զէնից է լինում . . . (Լռութիւն): Բայց չէ՞ որ քեզ ձօտ էլ միշտ Վալենտին Ֆեօդորովիչն է լինում:

Կինը. — Այդ բոլորովին ուրիշ բան է:

Իվ. Իվ. — Ինչո՞ւ է ուրիշ բան. հէնց միևնույն բանն է, եթէ ուզում ես իմանալ:

Կինը. — Վալենտին Ֆեօդորովիչը Զինոչկա չէ: Նա մի լուրջ, խելօք մարդ է: Նրա հետ խօսակցելը հաճելի է ինձ — և ուրիշ ոչինչ:

Իվ. Իվ. — Բայց գուցէ ես էլ Զինաիդա Վլադիմիրովնայի համար նոյնպէս լուրջ և խելօք մարդ եմ, ուստի և նա դերպասում է իմ ընկերակցութիւնը:

Կինը. — Դու շատ լաւ գիտես, որ ես գաւաճանող կանանցից չեմ: Եւ եթէ մինչև անգամ մի բան պատահի էլ, դու առաջինը կիմանալիր, ես ինքս առաջինը կասէի քեզ:

Իվ. Իվ. — Կարծես մի երևելի արտօնութիւն է առաջինը իմանալը: Դուք միայն այսպէս ասում էք միշտ, բայց եթէ լաւ քննենք, դուրս է գալիս, որ ամուսինը կամ բոլորովին չէ իմանում, կամ ամենից յետոյ է իմանում, երբ ար-

դէն ուշ է և բոլորովին կարիք էլ չ'կայ իմանալու: Ահա քեզ օրինակ — Ֆեօդոր Ֆեօդորովիչը. լսե՛լ ես ինչ է ասել կինը նրան, երբ նա նրանց բռնել է — «մենք քեզ կարգին մարդու տեղ էինք դնում և չէինք ուզում անհանգստացնել»: Ո՛րպիսի հոգատարութիւն: Խաբւած ամուսիններին էլ մի մխիթարութիւն է մնում, թէ ինչ է նրանք կարգին մարդիկ եւ:

Կինը. — Զարմանալի սովորութիւն ունիս դու. ես քեզ Զինոչկայի մասին եմ ասում, իսկ դու մէջ ես բերում ինչ որ Ֆեօդոր Ֆեօդորովիչի:

Իվ. Իվ. — Վկայ է Աստուած, որ այս Զինոչկան ուղղակի զղւեցրել է ինձ: Զինոչկա հա՛ Զինոչկա. նրա մասին է միայն քո խօսքը: (Մօտենալով կնոջը): Վերջապէս, մի՞թէ ամօթ չէ քեզ: Զէ՞ որ դու շատ լաւ գիտես, որ ես սիրում եմ քեզ: (Բռնում է ձեռքը): Տես ինչպիսի սիրուն ու փափլիկ թաթիկ է: (Համբուրում է): Ո՞վ ունի դրա նմանը:

Կինը. — Ինչպէս տեսնում եմ, դու շատ խորամանկն ես:

Իվ. Իվ. — Ամենևին խորամանկ չեմ: Ես խօսում եմ այսպէս, որովհետև ճշմարտութիւնը իմ կողմն է:

Կինը. — Մի՞թէ ճշմարտութիւնը:

Իվ. Իվ. — Իհարկէ ճշմարտութիւնը: Ի՞նչ կայ սուտ խօսելու: (Գրկելով նրա իրանը): Սպասիր, մէկ էլ հրաժեշտի համար: (Համբուրում է նրան և ուղեկցում մինչև դուռը):

ՏԵՍԻՍ Բ.

(Իվան Իվանովիչը մենակ լուռ անցուզարձ է անում և յետոյ ընկնում է սեղանի մօտ գտնուող բաղկաթոռի վրայ):

Իվ. Իվ. — Եւ այսպէս համարեա ամեն օր... Սատանան գիտէ, ճշմարիտ որ, երբ մտածում ես, բանից դուրս է գալիս, որ ամբողջ կեանքդ ստելով ես անց կացնում... Ստում ես առաւօտից մինչև զիշեր և զիշերւանից մինչև առաւօտ... և զլիսաւորապէս կանանց պատճառով: Եթէ կանայք չլինէին, տարէնք մի քսան-երեսուն սուտ կասէի և զբանով կրբականանայի: Մինչև զիշերը վրա է հասնում, լեզուս ստախօսութիւնից այնպէս է խառնուում ու ծռմուռում, որ մինչև անգամ զգանք է պատճառում. և ուրախանում եմ, որ ահա կրպառկեմ քնելու և կրդադարեմ սուտ խօսելուց... Բայց Ս.ստւած մի արասցէ, որ երազ տեսնես. դարձեալ սուտը, այստեղ էլ ամենալիրբ սուտը: (Ոտքի է կանգնում և սկսում է անցնել): Բայց ի՞նչպէս չ'ստել, երբ իւրաքանչիւր կին ճշմարտութիւն է պահանջում. միայն իրան մի ստիր, իսկ ուրիշներին — որքան ուզում ես: Պարզ է, որ զբանից յետոյ ամենքին էլ ստում ես: Շուտով կ'սպառւի արդարացումներին տուպրակը. ինչպէս երևում է, միջոց չեմ թողել, որ զօրժածած չ'լինեմ:

հիմա ուրիշ էլք չունիմ, բայց եթէ նորից սկսել: Եթէ ամենքը խօսքերը մէկ անեն ու զադարեն սուտ խօսելուց, երեկայում եմ, թէ ի՞նչ խառնաշփոթութիւն կառաջանար: Իսկ յետոյ տեսնէիր, որ ամեն ինչ իւր կարգովն է ընթանում՝ ամենքը իրանց տեղումն են, ամենքի համար կեանքը հեշտացել է և կրիզիսները միանգամայն չքացել են աշխարհի երեսից: Բոլոր կրիզիսներն ու անկարգութիւնները ստախօսութիւնից են առաջ գալիս: Եւ տեսնում եմ, որ իմ կիներ ոչ թէ կինս է, այլ իմ ազգանւանակիցն է, և ես ոչ թէ Սօֆեա Իվանովնայի ամուսինն եմ, այլ մի ինչ որ Պերեպետուեա Պետրովնայի... Եւ ի՞նչն է ամենից լկտին՝ այն, որ ստում ես ու չես էլ կարծրում, կարծես թէ այսպէս էլ հարկաւոր է. սովորութիւն է դարձել, մի ժառանգական սովորութիւն... Սակայն ձեռնտու բան է այդ ժառանգականութիւնը. կարող ես ամեն ինչ նրա վզին փաթաթել, իսկ ինքդ աղաւնու պէս մաքուր մնալ: Սպանութիւն գործեցիր — մեղաւորը պապդ է, մի բան գողացար — գողը տատդ է: (Այգու կողմից Զինուկան ջղային քայլերով երևան է գալիս և ուղեորւում է զէպի Իվան Իվանովիչը): Ա, Զինուկա, բարև: (Մօտենում է նրան և ուզում է զրկել):

ՏԵՍԻՒ Գ.

Զին. — (Բարկացած հրում է նրան): Խնդրեմ առանց փաղաքշանքների: Շռայլեցէք այդ ուրիշներին և ոչ ինձ:

Իվ. Իվ. — Այդ ինչո՞ւ համար է: Ի՞նչ է դարձեալ պատահել:

Զին. — Օ՛, իհարկէ ոչինչ. այնպէս միայն դատարկ բաներ են: Չէ՞ որ Ձեր կարծիքով այդ դատարկ բաներ են, այնպէս չէ: (Կանգ առնելով նրա առաջ և ազդու կերպով). Օ՛, որքան դուք անարգ ու ստոր մարդ էք. և դուք այդ ամենից յետոյ համարձակուած էք մօտենալ ինձ և փաղաքշել:

Իվ. Իվ. — Ինչպէ՞ս թէ «այդ ամենից յետոյ»: Ի՞նչ է դարձեալ պատահել: Ի՞նչ մեղք եմ գործել: Ա՛յ քեզ բան: (Ոչինչ չհասկացած սկսում է անցուդարձ անել):

Զին. — Ի՞նչ մեղք եմ գործել: Եւ դուք դեռ ևս հարցնում էք: (Թուճաւոր): Օ՛, իհարկէ ոչ մի մեղք չէք գործել: Այդ ես եմ միայն չիմարացել, որ ձեզ հաւատ եմ ընծայել: Լսո՞ւմ էք, չիմարը ե՛ս եմ: Դուք մեղաւոր չէք: Չէ՞ որ դուք երբէք և ոչ մի բանում մեղք չէք գործում: Դուք սուրբ մարդ էք:

Իվ. Իվ. — (Կանգ առնելով): Դէ բացատրիր վերջապէս:

Զին. — (Գոռալով): Դուք դեռ բացատրութիւն էք պահանջում և չէք էլ ամաչում... Օ՛, որքան անամօթ էք դուք:

Իվ. Իվ. — Մի գոռա ի սէր Աստուծոյ. սատանան տանէ, չէ՞ որ կարող են լսել, կինս տանն է: Չարզանալի է, դու քո ցոյցերի համար ինչպէս յաշող ես ընտրում միշտ թէ՛ ժամանակը և թէ՛ տեղը: Դու ուզում ես, որ ամենքը լսեն և անազին խայտառակութիւն դուրս դալ... այ՞ն: Է, ի՞նչ արած, բղաւիր, բղաւիր, բղաւիր... Այդ ի՞նչ խաթարալա՛ է: Թ՛փո՛ւ: (Բարկացած անցնում է):

Զին. — Ա՛, դուք վախենում էք: Ուրեմն հարկաւոր էր սիրել ձեզ այնպէս, ինչպէս ես էի սիրում, որպէսզի չնկատէր, որ դուք մի երկչոտ և ստախօս մարդ էք: Մինչև անգամ ոչ միայն ստախօս, այլ և անարդ ստախօս: (Լռութիւն): Իհարկէ, այդ չիմարութիւն է, որ ես ձեր առաջ ցոյց եմ անում — դուք դրան արժանի չէք և այդ բոլորը ձեր գութը ամենեին չեն շարժում: Չէ՞ որ իմ ասածը ձեր մի ականջից մտնում է, միւսից՝ դուրս դալիս: Ի՞նչ կարիք կար սուտ խօսելու: (Աւելի ևս բարկանալով): Ինչո՞ւ սաել, թէ դուք ինձ սիրում էք: Ես ամեն ինչ կարող ես տանել, բացի սուտից: (Գոռալով): Լսո՞ւմ էք, ամեն ինչ, ամեն ինչ:

Իվ. Իվ. — (Կանգ առնելով): Դէ, մի բղաւիր, խնդրեմ. այնպէս ասա, որ հասկանանք. ի՞նչպէս թէ «ամեն ինչ». մի՞թէ ես սաել եմ, թէ չեմ սիրում քեզ: Չէ՞ որ դու շատ լաւ գիտես, որ ես քեզ սիրում եմ:

Զին. — Մի՛ համարձակէք այդ ասել. զոնէ հի-
 մա մի ստէք: Ես պահանջում եմ, որ զուր
 ճիշտն ասէք՝ սիրո՞ւմ էք ինձ, թէ՞ ոչ:
 Մի վախենաք, ես չեմ թուճաւորւի, շուրջ չեմ
 ընկնի, չեմ էլ կախւի. դրանցից մի՛ վախենաք:
 Ես միայն ուզում եմ նշմարտութիւնը իմա-
 նայ, միմիայն մերկ ճշմարտութիւնը:

Իվ. Իվ. — (Բարկացած): Բայց չէ՛ որ ես ասում
 եմ, որ սիրում եմ քեզ:

Զին. — Սո՛ւտ էք ասում. այնպէս չէ. զուրք ինձ
 չէք սիրում:

Իվ. Իվ. — (Յողնած): Մի՛ս, Աստուած իմ, ո՛չ այդ
 ուղղակի անկարելի է: (Բարկացած): Էլ ինչո՞ւ
 ես զու ինձ հարցնում, եթէ հաւատացած ես,
 որ ես քեզ չեմ սիրում. ինչո՞ւ:

Զին. — Ինչո՞ւ էիք զուրք ինձ խաբում:

Իվ. Իվ. — (Բղաւելով): Ես քեզ չեմ խաբել:

Զին. — Ի՞նչ էք բղաւում. ի՞նչպէս էք զուրք հա-
 մարձակում ինձ վրայ բղաւել:

Իվ. Իվ. — (Բարկացած անցուդարձ է անում):
 Ես չեմ բղաւում, բայց այս տեսարանը ամեն-
 քին էլ, Աստուած դիտէ, թէ ինչ հետեւանքի
 կարող է հասցնել:

Զին. — Այդ ե՞ս եմ ձեզ հարցնում, թէ՞ զուրք
 ինձ: Օ՛, իհարկէ այդ շատ բանաստեղծական
 է. զիշէր, լուսին և նրանք աղաւնիների պէս
 մնչում են: Օ՛, որքան բանաստեղծական
 է այդ, սրտաշարժ է, անարդ ու ստոր
 է: Լսո՞ւմ էք: Գուցէ այդ էլ կ'ժխտէք:

Ձեզանից այդ սպասելի է: Ես իմ աչքերով
 տեսայ, ինչպէս զուրք ձեր կնոջ հետ սիրա-
 հարւած շների նման լիզում էիք իրար:

Իվ. Իվ. — Թփո՛ւռ, սատանան տանէ, զու մի
 փոքր քաղաքավարի եղի՛ր:

Զին. — Ես քաղաքավարութեան չետեից ընկնե-
 լու ժամանակ չուճիմ: Դէ, շատ լաւ, համեցէք՝
 համբուրւում էիք, համբուրւում էիք, համ-
 բուրւում էիք:

Իվ. Իվ. — Ճշմարիտ որ կինը որքան էլ բանաս-
 տեղծական լինի, սակայն երբ բանը դայիս
 խանդին է հասնում, նա անտանելի է դառնում:

Զին. — Ես ձեզ չեմ խանդում: Խնդրեմ մի երևա-
 կայէք, թէ ես ձեզ խանդում եմ, զուրք զրան
 արժանի չէք: Բայց ինձ դժւեցնողը ձեր սուտն
 է միայն, ձեզ զղւելի, ձեր գարշելի սուտը:

Իվ. Իվ. — (Բարկացած): Շատ լաւ, ինչու՞մն էք
 բռնել սուտս: (Զինուկան լուռ և անթարթ
 նայում է Իվան Իվանովիչին): Այո՛, ես ձեզ
 հարցնում եմ, ինչո՞ւմն է կայանում իմ սուտը:

Զին. — (Չհասկանալով): Կէտք է խոստովանել,
 որ ես չ'գիտէի, թէ զուրք այդքան անամօթ
 էք: (Մօտ գալով նրան և բռունցքները սեղ-
 մելով): Օ՛, ի՞նչպէս ատում եմ ես ձեզ . . .
 Այժմ մեր մէջ ամեն ինչ վերջացած է. ամեն
 ինչ. ամեն ինչ:

Իվ. Իվ. — Եւ շատ ուրախ եմ: Միայն թէ աղա-
 տեցէք ինձ ընդմիշտ այգօրինակ ցոյցերից:

Զին. — (Խեղացնորի պէս): Մ՛, զուրք ուրախ էք . . .

դուք ուրախ էք . . . (Մի քայլ անելով դէպի
Իվան Իվանովիչը, շնչասպառ): Սպասեցէք,
ուրախանալ . . . ահա թէ ուր հասաւ բանը . . .
ահա թէ ուր հասաւ . . . նա ուրախ է, լսում
էք . . . նա ուրախ է . . . Դէ լաւ . . . (Դար-
ծեալ դառնալով դէպի նա): Սակայն իմացէք
մի բան միայն, որ եթէ ես թունաւորեմ, մե-
ղաւորը դուք կլինէք, դուք, դուք . . . (Լալիս է):

Իվ. Իվ. — Ո՛չ, այդ անտանելի է: Մէջ բեղ ան-
բախտութիւն, իմ արեւը վկա: Դէ լաւ, ի՞նչ է
պատահել, ի՞նչ ատր: Որ կնոջս եմ համբուրել
և այդ պատճառով է այս փոթորիկը բար-
ձրացել, այո՛: Չարմանալի է, զորոյը տանի:
(Սկսում է արագ անց ու դարձ անկ սենեա-
կի մէջ):

Ձին. — Եթէ չ'սիրէիք, չէիք էլ համբուրել:
Իվ. Իվ. — (Շարունակելով վազելը): Էլ ի՞նչ ասեմ . . . իհարկէ որ, իհարկէ . . . Փո՛ւ . . .

Ձին. — Մէջ, դուք էլ համաձայնուում էք:
Իվ. Իվ. — (Յանկարծ կանգ առնելով): Ինչո՞ւմն
եմ ես համաձայնուում, ինչո՞ւմը: Ասա խնդրեմ,
նա իմ կի՞նն է, թէ՞ ոչ: Ուրեմն ես չեմ կա-
րող կնոջս համբուրել, և եթէ համբուրում եմ,
նշանակում է չանցանք եմ գործում: Այգալէս
է ձեր կարծիքով: Իսկ եթէ դու մօրաբորոյդ
համբուրում ես, նշանակում է, սիրում ես:
Եթէ ընկերուհուդ ես համբուրում, նշանակում
է սիրում ես: Կուզե՛ս, որ ես էլ այդպէս հաս-
կանամ: Դէ, լսիր, ասեմ՝ համբուրում ես, որով-

հետև սովորութիւն է դարձած: Մարդս սո-
վորել է խօսքերով ստել, ստում է և՛ շրթունք-
ներով: (Անցնում է):

Ձին. — Նամբուրեցէք, եթէ այդքան ցանկանում
էք, բայց ո՛չ իմ ներկայութեամբ:

Իվ. Իվ. — Ո՞վ գիտէր, որ դու ծածուկ տեղերից
լրտեսում ես:

Ձին. — Մի համարձակէք այդպէս ասել: Ես չէի
լրտեսում: Դուք իրաւունք չունիք այդպէս խօ-
սելու: Կարծես այդ ամենը բաւական չէ. նա
զեռ վիրաւորուում էլ է: Ես ուղղակի անց-
նում էի:

Իվ. Իվ. — Ուրեմն ուրիշ անգամ մի՛ անցիր: Մի
ուրիշ տեղ ընտրի՛ր:

Ձին. — Ահա՛ թէ ինչ. ուրեմն ես ձեզ խանգարում
եմ: (Քայլ անելով դէպի նա, զայրացած): Դէ,
մի բան էլ ասացէ՛ք: Մի բան էլ ասացէ՛ք.
դէ՛. դէ՛ . . . (Իվան Իվանովիչը լուռ շարունա-
կում է անցնել): Ինչո՞ւ էք լուռ, խօսեցէ՛ք:
Ես ձեզ խանգարում եմ, այո՛:

Իվ. Իվ. — (Փոքր ինչ վախեցած): Վերջապէս ե՞րբ
է վերջանալու այդ բանը . . . (Մօտենալով
նրան ուզում է համոզել): Դէ, բաւական է,
վերջապէս: Ի՞նչ բան է այս: Մէկ ամաչէիր:

Ձին. Չ'համարձակէք մօտենալ ինձ, չ'համար-
ձակէք:

Իվ. Իվ. — Դէ, լաւ վերջապէս, լաւ, բաւական է.
խոհեմ եղիր: (Ուզում է վերջնել նրա ձեռքերը
և համբուրել):



Զին. (Խըկելով ձեռները): Ո՛ւշ է, ո՛ւշ: Թողէ՛ք ինձ:
 Իվ. Իվ. — Ի՞նչն է ուշ: (Աշխատում է բռնել նրա
 իրանը. նրանց մէջ կռիւ է կատարւում): Ա՛խ,
 ինչպէս դու, Աստուած վկայ, չիմար ես: Դէ,
 մտածի՛ր, մի լաւ, մտածի՛ր: (Գրկում է նրա
 իրանը և պահում): Միեւնոյն է, հիմա ես քեզ
 չեմ բաց թողնի: (Նա ճիգ է անում ազատու-
 լու): Զո՛ւր է, գո՛ւր, չեմ թողնի: (Իվան Իվա-
 նովիչը նստեցնում է նրան իւր ծնկների վրայ
 և պահում): Դէ ի՛նքդ մի լաւ մտածի՛ր, չէ՞
 որ ուրիշ կերպ ես չեմ կարող: Զէ՞ որ ինչ էլ
 որ լինի նա կինս է, այսպէս թէ այնպէս նա
 իմ կինն է: Մեր մէջ, կարելի է ասել, մի որոշ՝
 այսպէս ասած, սովորութիւն է առաջ եկել:
 Մինչև անդամ, եթէ ուղրւմ ես իմանալ, մի
 շատ մեծ սովորութիւն:

Զին. — (Աշխատելով դուրս պրծնել): Եւ այդ մի
 տարւայ մէջ է առաջացել այս մեծ սովորու-
 թիւնը: Էլ չկայ ստելու բան: (Աշխատելով
 ազատուել): Բաց թողէք ինձ, ասում եմ ձեզ:

Իվ. Իվ. — Ես քեզ ասացի, որ բաց չեմ թողնի,
 մէկ լսի՛ր, խելօք նստի՛ր: Ինչո՞ւ ես կարծում,
 որ մենք սովորութիւններ չպէտք է ունե-
 նանք: Ա՛խ, ինչպէս բացատրեմ ես քեզ այդ...
 Գիտես, սիրելիս, մարդս մի բանի կարող է
 շուտ ընտելանալ, իսկ միւսին՝ ոչ: Այ՛ն, օրի-
 նակի համար... ր... ր... ի՞նչ ասեմ ես
 քեզ... Ա՛յ քեզ օրինակի համար մի բան
 ասեմ: Գորօխի կիսելը թէկուզ հարիւր տա-

րի էլ ուտես, դարձեալ չես կարող ընտելանալ
 նրան, բայց շամպանիայով մի ժամւայ մէջ
 կարելի է դրաւել:

Զին. — (Յանկարծ դուրս պրծնելով, թունաւոր):
 Ահա՛ թէ ի՛նչ, վերջապէս ասացիք ձեր ասե-
 լիքը: Նշանակում է ձեր կինը շամպանիա է,
 իսկ ես գորօխի կիսել, ձեր կարծիքով:

Իվ. Իվ. — Ոչ, ինձ լսեցէ՛ք... . . .

Զին. — Ո՛չ, դուք ասացէք, ի՞նչ եմ ես:

Իվ. Իվ. — (Վեր թռչելով): Բայց մի՞թէ ես ասում
 եմ, որ իմ կինը շամպանիա է. հասկացի՛ր... . . .

Զին. — Ուրեմն դուք շամպանիայով էք արբում.
 ահա թէ ի՛նչ: Իսկ ես այդ չ'զիտէի:

Իվ. Իվ. — Հասկացի՛ր, որ... . . . ես օրինակ եմ բե-
 րում:

Զին. — Զպէտք է մոռանալ... . . . Շամպանիա,
 շամպանիա... . . .

Իվ. Իվ. — Բայց ես այդ օրինակ... . . .

Զին. — Շամպանիա:

Իվ. Իվ. — (Համբերութիւնից դուրս դալով):
 Թ'ի՛նու... (Կատաղած սկսում է վազվզել):
 Ոչ ես կրկախւեմ, ուղիղն եմ ասում կրկախ-
 ւեմ, ինչ է որ... . . . Կարելի է միթէ դիմանալ
 այդ ամենին: (Լռութիւն): Մ՛, ինչպէս թու-
 նաւոր էք նայում դուք... . . . Ո՛րպիսի սրհա-
 մարանք, ասացէք խնդրեմ: (Յանկարծ մօտ
 վազելով դէպի նա, խօսում է ծալրաչեղ կա-
 տաղութեամբ, տեղ-տեղ կանգ առնելով): Բայց
 մի-թէ ես տա-ցի, թէ իմ կինը շամպա-նիա

է, իսկ դու գործխի կիսել: Ես միայն օրինակ բերեցի, լսում էք՝ օրինակ: (Անթարթ նայում է Ջինոկային): Ա, թող կորչի, բայրբ կորչի: (Դարձեալ սկսում է վազվզել):

Ջին. — (Փոքր լուսթիւնից չետոյ): Ի՞նչ էք կատաղում:

Իվ. Իվ. — Ես այլևս չեմ կարող, ուզիղն եմ ասում՝ չեմ կարող:

Ջին. — Բայց ի՞նչ էք կարող... Ինձ իհարկէ վիրաւորական թւաց, որ դուք այսպիսի համեմատութիւն արիք:

Իվ. Իվ. — Ոչ թէ համեմատութիւն, այլ օրինակ, լսում էք՝ օրինակ:

Ջին. — Ի՞նչ էք գոռում, ես առանց այն էլ լսում եմ:

Իվ. Իվ. — Իմ տեղ դու լինես, աւելի կ'բղաւես:

Ջին. — Մեղաւորը դուք էք, վաղուց կարող էիք հանդատացնել:

Իվ. Իվ. — Բայց թողիր, որ քեզ հանգստացնեմ: Եկար թէ չէ, հայհոյանքներովդ վրաս չարձակեցիր: (Ման է գալիս):

Ջին. — Ես քեզ չեմ հայհոյել:

Իվ. Իվ. — (Թունաւոր): Այո՛, չես հայհոյել:

Ջին. — Իսկ եթէ հայհոյել եմ, նշանակում է ես ինքնամոռացման մէջ եմ եղել:

Իվ. Իվ. — Իհարկէ, քո կարծիքով, դրա փաղաքշական խօսքեր են: Եթէ ես ասէի քեզ մի այսպիսի խօսք, երեւակայում եմ, թէ ինչեր կը-

պատահէր... Ոչ մի արդարացում չէր կարող օգնել: Եթէ մինչև անգամ հաստատէր, որ դորժել եմ կատարեալ խելացնորութեանս միջոցին, դարձեալ բանի տեղ չէր դրւի... Մեզ համար ոչ մի արդարացում գոյութիւն չունի, իսկ ձեզ համար — որքան կուզէք... Դեռ էլի պահանջում են ինչ ինչ իրաւունքների հաւասարութիւն... Բայց դիտե՛ս, որ ձեր իրաւունքները հազարապատիկ աւելի են, քան թէ մերը: Մի բանում եթէ մերն է աւելի լինում, միւսում ձերն է աւելի, այնպէս որ վերջիվերջոյ հաւասար ենք դուրս գալիս:

Ջին. — Բաւական է չարանաք:

Իվ. Իվ. — Ամենևին բաւական չէ: Դուք կարող էք հասարակութեան մէջ կոչել մեզ չիմար և էլ չզիտեմ դրա նման ինչպիսի անուշ խօսքերով, իսկ ձեք կատակով էլ իրաւունք չունինք ձեզ այսպէս կոչելու: Ի՞նչպէս կարելի է, «մենք կին ենք»: Երբ որ ամուսինը գաւաճանում է և կինն էլ իմանում է, նա այդ ամեն տեղ պատմում է, և ինչեր չի յօրինում. իրան էլ, ի դէպ, այն աստիճան բարձրացնում ու սրբացնում է, որ չ'ճանաչողը պատրաստ է լինում պատկերը նկարելու ու առաջը խօսնկ ծխելու: Բայց երբ կինն է գաւաճանում — ամուսինը պէտք է լռէ... Չէ՞ որ յանցաւորը կին է, մի թող արարած, խնայել պէտք

է . . . Եւ լռում են այդ չիմարները. իսկ կանայք զրանից փառաւորապէս օգաւում են . . .

Զին. — Երկաթ պէտք է կարգաք ձեր խրատները:

Իվ. Իվ. — Ես խրատներ չեմ կարգում: Բացի այդ ես վերջացրի էլ: Ինչ օգուտ ձեզ խրատներ կարդալուց. մի ականջով լսում էք, միւսով բաց թողնում: Դրանք կօմպլիմէնտներ չեն, որոնք ձեր մտքի կենարոնն են բռնում:

Զին. — Ասե՛ք կօմպլիմէնտներ ձեզանից ես վաղուց չեմ լսել: Եւ գուցէ չեմ էլ լսի ալլևս:

Իվ. Իվ. — Ուրեմն ի՞նչ ես ուզում: Դու ինձ չիմարի տեղ գնես, իսկ ես քեզ «հրեշտակ» անւանեմ: (Նստում է):

Զին. — Ի՞նչ արած. ուժով սիրել չի կարելի: Ես պարզ տեսնում եմ, որ դուք ինձ ալլևս չէք սիրում:

Իվ. Իվ. — (Յոգնած ձայնով): Դարձեալ դու . . . զիտե՛ս, Զինուհի, դու այժմ խօսի՛ր, ինչ որ սիրադ է ուզում. ինձ համար միւսնոյն է . . . ես ուղղակի ուժասպառ եմ եղած: Կնոջս հետ — ցոյց, քեզ հետ — ցոյց. այնտեղ խնդրիր ներողութիւն, այնտեղ խնդրիր ներողութիւն . . . Ես այժմ միմիայն ինձ եմ սիրում:

Զին. — Դուք միշտ էլ ինքնասէր էք եղել:

Իվ. Իվ. — Իսկ դու, իհարկէ, ինքնասէր չես: Դու ինձ սիրում ես միայն ինձ համար, իմ երջանկութեան, իմ ուրախութիւնների համար: Այս տեսարանն էլ, ով զիտէ, իմ բարօրութեան համար սարքեցիր: (Լռութիւն: Իվան Իվանովիչը սկսում է ծխել):

Զին. — (Նայելով նրան): Ի՞նչ էք ծածռում ձեր գէմքը:

Իվ. Իվ. — (Ծխելով): Ես գէմքս չեմ ծոծռում, ծուխն եմ բաց թողնում: (Լռութիւն):

Զին. (Կամայ ձայնով նրան): Դուք մի՞թէ սիրում էք ինձ:

Իվ. Իվ. — (Կէս բարկացած, կէս անհամբեր): Իհարկէ սիրում եմ. վկայ է Աստուած: Ինչպէս հաւատացնեմ քեզ այլ ևս:

Զին. — (Իվան Իվանովիչի նստած բաղկաթուի կանակի վրայ նստելով): Դէ լաւ, մի բարկանար: (Մի փոքր լռելուց լեռայ ձեռքը պատեցնում է Իվան Իվանովիչի աչքերի շուրջը և բերում է նրա շրթներին կպցնում): Տէ՛ս ինչ փոքրիկ թաթիկ ունիմ. փոքրիկ է չէ՞:

Իվ. Իվ. Այո՛, փոքրիկ է:

Զին. Զեւոնցներիս համարը հինգ ու մի քառորդ է. իսկ կոշիկներիս համարը ինն է: Գիտես, այդ համարները միայն մեծ-մեծ մազազիններում կարելի է գտնել, ալլապէս հարկաւոր է լինում պատուէր տալ:

Իվ. Իվ. — (Անտարբեր): Այո՛:

Զին. — (Փոքր ինչ ուռած): Է, ինչպէս երևում է, դու ոչինչ չես լսում:

Իվ. Իվ. — (Նոյն տոնով): Ոչ, ես լսում եմ:

Զին. — (Տեղից ցատկելով): Այդ իսկոյն երևում է: (Բարկացած): Եթէ ձեր կինը լինէր, ով զիտէ երկու ականջներդ տասը կրդարձնէիր: Էլ ձեռք ու ոտք չէիր թողնի, որ չ'համբու-

րէիք. մինչև անդամ ծունկ կրխոնարհէիք ա-
ռաչք: (Իվան Իվանովիչը անհամբեր շարժում-
ներ է անում): Ի՞նչ էք կոտրուում, ես ճիշտն
եմ ասում... (Անթարթ նայում է նրան):
Օ՛, որքան էգոիստ էք դուք, որքան կոպիտ,
ժարդ էք: Ես հիմա եմ միայն տեսնում թէ ով
էք դուք...:

Իվ. Իվ. — (Տեղից վեր կենալով): Օ՛, Տէր իմ, դէ
բաւական է: (Բռնում է նրա իրանը և թեք-
ւում դէպի նա): Ձէ՛ որ այդ անկարելի է.
Աստուած վկայ չողնել եմ: (Համբուրում է
նրան): Երգւում եմ, որ չողնել եմ: Ա՛խ, որ-
քան տարօրինակ ես դու:

ՏԵՍԻՒ Գ.

Մտնում է Իվ. Իվանովիչի կինը և տեսնելով այս տե-
սարանը, իսկոյն կանգ է առնում:

Իվ. Իվ. — (Վախեցած): Կի՛նս... (Բաց է թող-
նում Ձինոզկային, որը քաշւում է մի կողմ):

Կինը. — Այ բեզ բան: Այդ ի՞նչ է նշանակում:

Իվ. Իվ. — (Ձեռներով չննւում է սեղանին, երեսը
դարձնում է հասարակութեան): Ի՞նչ է նշա-
նակ՞ում: (Ուսերը շարժելով): Այն՝ որ ես ար-
դէն բռնւեցայ, իսկ դուք... իսկ դուք զեռ ո՛չ:
(Պաակեր):



13676

108 /
9-10

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.